Հավելված
ՀՀ վարչապետի N 1160 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու կամ ընդունելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու և ընդունելու ժամկետները	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական ակտի ընդունման հիմքը
1.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ պաշտպանության նախարարություն	Ներկայացման ժամկետը՝ 2025 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ Ընդունման ժամկետը՝ մինչև 2025 թվականի փետրվարի 5-ը	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՕ-372-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներ

2.	«Այն զորամասերի ցանկը սահմանելու մասին, որոնցում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու և ոչ ավելի, քան «փոխգնդապետ» կոչումային դասակարգմամբ զինվորական պաշտոնի նշանակելու դեպքում պահպանվում է զինծառայողի՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանն ընդունելը	ՀՀ պաշտպանության նախարարություն	2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ընդունման ժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՕ-371-Ն օրենքի 1-ին հոդված
3.	«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1550-Լ հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանն ընդունելը	ՀՀ պաշտպանության նախարարություն	Ներկայացման ժամկետը՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ընդունման ժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՕ-371-Ն օրենքի 1-ին հոդված

4.	«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1553-Լ հրամանում լրացումներ կատա-ռելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանն ընդունելը	ՀՀ պաշտպանության նախարարություն	Ներկայացման ժամկետը՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ընդունման ժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՕ-371-Ն օրենքի 1-ին հոդված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ